

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Վարչական մարմինների կողմից ընդունված որոշումների վերանայման իրավական հնարավորությունը համարվում է ինչպես ժողովրդավարության, այնպես էլ վարչարարության արդյունավետության կարևոր տարր:

Վարչական մարմնի կողմից վերանայման գործառույթը կարելի է բնորոշել որպես հանրային իրավահարաբերությունների շրջանակներում ծագող վեճերի լուծման վարչական ընթացակարգ, որն էլ հանդիսանում է գործը ՀՀ վարչական դատարանին հանձնելուն այլընտրանքային տարբերակ:

Վարչական ակտ կայացրած պաշտոնատար անձի վերադաս մարմնի կողմից վերանայումը, մասնավորապես՝ համապատասխան ակտի կայացման հիմնավորվածության օբյեկտիվ և անկողմնակալ քննությունը, ակնհայտորեն հանգեցնում է վարչական դատարանի անհարկի ծանրաբեռնվածության նվազեցմանը, իսկ վարչական մարմնի կողմից կայացված վարչական ակտի վերադասության կարգով վերանայման ոչ պարտադիր լինելը կամ վերադասության կարգով վերանայման կողմնակալությունը հանգեցնում է վարչական ակտերի հասցեատերերի կողմից անտեղի և չհիմնավորված բողոքարկումներին և դատարանների կողմից արդյունավետ արդարադատության իրականացման օբյեկտիվ հնարավորության բացակայությանը:

Ուստի, կարելի է արձանագրել, որ վարչական ակտերի վերադաս մարմնի կողմից վերանայման դերը մեծացնելը և անհրաժեշտ չափով նշանակություն տալը կհանգեցնի ինչպես գործադիր մարմնի կողմից իր իրավասությունների պատշաճ կատարմանն, այնպես էլ կապահովի արդարադատության համակարգում շոշափելի արդյունքների հասնելն և արդյունավետության միջազգային չափանիշներին համապատասխան ստանդարտներ ունենալը:

Գործող իրավակարգավորումների շրջանակներում օրենսդիրը որոշ դեպքերում դատական պաշտպանության դիմելու անձի իրավունքի ծագումը պայմանավորել է մինչև դատարան դիմելը որոշակի գործողությունների պարտադիր կատարմամբ, մասնավորապես՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է հստակ զանցանքների ցանկ, որոնց վերաբերյալ կայացրած վարչական ակտերը չեն կարող միանգամից վիճարկվել դատարանում, այլ պարտադիր պայման է մինչև հայց ներկայացնելը վարչական ակտը բողոքարկելը վերադասության կարգով:

Նշվածից բխում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշման վերադասության կարգով

բողոքարկումը հանդիսանում է պարտադիր վավերապայման վարչական դատարան վիճարկման հայց ներկայացնելու իրավական հնարավորություն ստանալու համար:

Նման պայմաններում օբյեկտիվորեն խոսք չի կարող գնալ անձի դատարան դիմելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ, քանի որ նշված իրավակարգավորումների արդյունքում վարչական ակտի հասցեատերը չի կորցնում դատարան դիմելու իրավունքը և նրա այդ իրավունքը չի սահմանափակվում, քանի որ վերադասության կարգով բողոքարկումը որևէ լրացուցիչ ֆինանսական բեռ չի առաջացնում անձի համար, այլ հակառակը՝ վարչական ակտի հասցեատիրոջ բողոքը/զանգատը բավարարվելու դեպքում, ապագայում համապատասխան ակտը չբողոքարկվելու պայմաններում անձը ազատվում է պետական տուրք վճարելու անհրաժեշտությունից:

Վարչական իրավախախտումները տեսակավորելը և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավախախտումների վերաբերյալ գործերով պարտադիր կարգով վերադասության բողոքարկում սահմանելը պայմանավորված է բացառապես նման իրավախախտումների վերաբերյալ գործերի մեծ քանակով և դատարանները բեռնաթափելու անհրաժեշտությամբ, սակայն նման մոտեցումը չի կարելի միանշանակ հիմնավորված համարել, քանի որ որոշ դեպքերում իրականացվող վարչարարությունը իր բնույթով լինում է շատ տեխնիկական, և բնույթով պայմանավորված վարչական կարգով բողոքարկման պարտադիրության սահմանումը նույնպես անհրաժեշտ և արդյունավետ միջոց կարելի է դիտարկել:

Ներկայումս վերադասության կարգով վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության բողոքարկման պարտադիրությունը սահմանված է միայն որոշ իրավախախտումների վերաբերյալ գործերով, որոնց շարքին են դասվում նաև ՀՀ Ոստիկանության իրավասության շրջանակներում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, սակայն ՀՀ ՆԳՆ ոստիկանության իրավասու մարմինների կողմից կայացրած ոչ բոլոր վարչական ակտերն են, որ ենթադրում են պարտադիր վերադասության կարգով բողոքարկում նախքան դատարանում վիճարկելը, ինչը որոշ դեպքերում հանգեցնում է համապատասխան վարչական ակտերի հասցեատերերի կողմից անհարկի բողոքարկումներին՝ առանց վերադասության կարգով զանգատ/բողոք ներկայացնելու:

Նշվածի արդյունքում անհարկի ծանրաբեռնվում են դատարանները, ընդ որում՝ ծանրաբեռնվում են ոչ միայն վարույթում քննվող գործերի մեծ քանակով, այլ նաև ֆինանսական առումով, քանի որ որոշ դեպքերում վարչական ակտի վիճարկման համար վճարման ենթակա պետական տուրքը կազմում է բազային տուրքի քառապատիկը, ինչը օբյեկտիվորեն նույնիսկ չի կարող համեմատության մեջ դրվել այն ֆինանսական ռեսուրսների հետ, որոնք ծախսվում են համապատասխան դատաքննության ընթացքում:

Ընդ որում, լինում են դեպքեր, երբ գործի քննությունը չի իրականացվում գրավոր ընթացակարգով, որը լրացուցիչ անգամ ավելացնում է ֆինանսական բեռը և անհարկի մեծացնում վարչական դատարանի արդեն իսկ առկա ծանրաբեռնվածությունը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածով սահմանված իրավախախտումների համար ՀՀ ՆԳՆ ոստիկանության պաշտոնատար անձը իրավասու չէ կայացնել վարչական ակտը, այլ սահմանափակված է միայն վարչական իրավախախտման համար արձանագրության կազմելով և համապատասխան արձանագրության հիման վրա վարչական դատարան հայց ներկայացնելով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում համեմատաբար նոր է սահմանվել դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթին առնչվող իրավակարգավորումները, և դրանում սահմանված դրույթները կարելի է ասել, որ նույնանում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված ընդհանուր դրույթներին, ինչի արդյունքում ստացվում է, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պաշտոնատար անձի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելը և հայց ներկայացնելը գրեթե նույնանում է այն վարչարարությանը, որը եզրափակվում է վարչական ակտի կայացմամբ: Հետևաբար՝ այս համատեքստում ևս անհարկի ծանրաբեռնվածություն է դրվում վարչական դատարանի վրա, իսկ հետագայում, մասնավորապես՝ գործի քննության ընթացքում, նաև իրավասու վարչական մարմնի վրա:

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում կատարված վարչական իրավախախտումների հիմքով կայացված վարչական ակտերը հաճախ վարչական կամ դատական կարգով վիճարկվում են՝ նպատակ ունենալով հետաձգել տուգանքի վճարման պարտավորության կատարումը: Այս իրավիճակը հանգեցնում է մի կողմից այս խումբ վարչական տույժերի կատարման գործընթացում սոցիալական լարվածության ավելացմանը, մյուս կողմից՝ հիշատակված վարչական ակտերի առնչությամբ Ոստիկանության և Վարչական դատարանի ծանրաբեռնվածության բարձրացմանը:

Վերոգրյալ վարչական ակտերը կամովին չկատարելու արդյունքում հանրային իրավական դրամական այդ պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման, ինչն էականորեն ավելացնում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ծանրաբեռնվածությունը:

Այսպես, 2023 թվականի հունվարի 11-ի դրությամբ Ծառայության վարույթում խնդրո առարկա իրավախախտումների վերաբերյալ առկա է 600 հազարից ավելի կատարողական վարույթ, իսկ չկատարված պարտավորությունների ընդհանուր չափը գերազանցում է 8 մլրդ ՀՀ դրամը:

Վերը նկարագրված իրավիճակը հետևանք է նաև այն հանգամանքի, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում կատարված իրավախախտումների հիմքով նշանակված տուգանքի վճարման պարտավորության կամովին կատարումը խրախուսելու գործիքակազմեր: Մասնավորապես, վարչական տույժի ենթարկված քաղաքացու կողմից տուգանքի վճարման պարտավորությունը ժամանակին և պատշաճ կատարելու դեպքում որևէ խրախուսական նորմ կամ պարտավորության կատարումը խթանող օրենսդրական գործիքներ նախատեսված չեն: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Ծառայության կողմից հարուցված կատարողական վարույթների մի ստվար զանգված ավարտվում է, քանի որ պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույք

կամ դրամական միջոցներ չեն հայտնաբերվում, հաճախ ստեղծվում է իրավիճակ, երբ տուգանք նշանակված լինելու պայմաններում քաղաքացին չունի ո՛չ իրեն պատկանող գույքը կորցնելու իրական մտավախություն, ո՛չ պարտավորության կատարումը խթանող գործիքակազմ, ինչպիսի պայմաններում տուգանքի վճարման պարտավորությունները տարիներ շարունակ մնում են չկատարված:

Մինչդեռ տուգանքի վճարման պարտավորությունը կամովին կատարելը խթանելու գործիքակազմի նախատեսման դեպքում հնարավոր կլինի ինչպես էականորեն նվազեցնել այս խումբ վարչական իրավախախտումների առնչությամբ առկա սոցիալական լարվածությունը, այնպես էլ կրճատել Ոստիկանության, Վարչական դատարանի և Ծառայության ծանրաբեռնվածությունը:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունում վարչական իրավախախտումների առնչությամբ կիրառված համաներումների հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունից ակնհայտ է, որ կիրառված մասնակի համաներումների արդյունքում քաղաքացիների կողմից զգալի չափով կամովին կատարվել են տուգանքների վճարման պարտավորությունները, ինչի արդյունքում կարճվել են բազմաթիվ կատարողական վարույթներ, որոնք տարիներ շարունակ ավարտված էին՝ պարտապանների գույք չունենալու կամ գույքի անբավարարության հիմքով:

Վերոգրյալի համատեքստում ակնհայտ է նաև, որ առկա է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում կատարված վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքի վճարման պարտավորության կամովին կատարումը խթանող գործիքակազմի ներդրման անհրաժեշտություն:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը և նպատակը.

Առաջադրված խնդիրները լուծելուն ուղղված առաջակում ենք հետևյալը.

2.1. Սահմանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության մարմինների կողմից կայացված վարչական ակտերի և դրսևորած գործողությունների և անգործության վերադասության կարգով բողոքարկման/զանգատարկման պահանջ (արտադատական ընթացակարգ), նախքան դատական կարգով դիմելը:

Հիմնավորում.

Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից և դրանից բխող գործողությունների ծրագրի շրջանակներում ի թիվս այլ ռազմավարական նպատակների, նախատեսված է վարչական և վարչական դատավարության օրենսդրության բարեփոխումների անհրաժեշտությունը: Մասնավորապես՝ առանձնահատուկ արձանագրվել է, որ անհրաժեշտ է ուսումնասիրության և քննարկման

առարկա դարձնել նաև վարչական դատարանին ենթակա վեճերի այլընտրանքային լուծման եղանակների նախատեսման իրավական հնարավորության և դրա օբյեկտիվ անհրաժեշտության հարցը¹:

Այլընտրանքային լուծման տարբերակների շարքին կարելի է դասել նաև վերադասության կարգով բողոքարկման ինստիտուտի կատարելագործումը և անհրաժեշտ իրավակարգավորումների ներդրումը, ընդ որում՝ այլընտանքային վեճերի լուծման տարբերակը այլ կերպ կարելի է անվանել միջազգայնորեն ընդունված տերմինով՝ «վարչական արդարադատություն»:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում դատարանների համար դեռևս տասնամյակներ առաջ անհրաժեշտություն էր առաջացել թոթափելու այդ պահին առկա ծանրաբեռնվածության մակարդակը, ինչը մեծամասամբ պայմանավորված էր վարչական մարմինների որոշումների դեմ բողոքների հետ կապված հսկայական թվով գործերի հետ:

Այնուամենայնիվ, «վարչական արդարադատություն» եզրույթը տարբերվում է ուղղակի վերադասության բողոքարկման վարույթից, իսկ պարտադիր վերադասության կարգով բողոքարկման եզրույթի փոխարեն Ամերիկայի միացյալ նահանգներում օգտագործվում է՝ «exhaustion of administrative remedies» տերմինը, որ թարգմանաբար նշանակում է վարչական միջոցների սպառում: Նշված եզրույթը մեկնաբանվում է որպես վարչական պաշտպանության միջոցների սպառման դոկտրին, քանի որ անձը, որը վիճարկում է վարչական մարմնի որոշումը, նախ պետք է հետամուտ լինի և սպառի բողոքարկման բոլոր հասանելի միջոցները նախքան դատական վերանայման համար դիմելը²:

Վերոգրյալով պայմանավորված՝ սահմանվել են կարգավորումներ առ այն, որ վարչական մարմնի դեմ հայց հարուցելուց առաջ անհրաժեշտ է նախապես սպառել վարչական պաշտպանության բոլոր հնարավոր իրավական գործիքները³: Միաժամանակ օրենքով սահմանված դեպքերում առկա է նշված ընդհանուր կանոնից բացառությունը, որպիսի դեպքերում վարչական պաշտպանության միջոցների սպառումը պարտադիր պայման չէ⁴:

¹ Տե՛ս Հավելված N 1, ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133-Լ որոշման: Էջ 50: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176970> (էլեկտրոնային հասանելիությունը 02.10.2023 թվականի դրությամբ)

² Տե՛ս <https://www.nyulawreview.org/issues/volume-93-number-5/jurisdiction-exhaustion-of-administrative-remedies-and-constitutional-claims/#:~:text=The%20doctrine%20of%20exhaustion%20of,system%20and%20autonomous%20administrative%20stat> e. (էլեկտրոնային հասանելիությունը 17.10.2023 թվականի դրությամբ)

³ Տե՛ս <https://www.justice.gov/jm/civil-resource-manual-34-exhaustion-administrative-remedies> (էլեկտրոնային հասանելիությունը 17.10.2023 թվականի դրությամբ)

⁴ Տե՛ս <https://www.law.cornell.edu/uscode/text/5/704> (էլեկտրոնային հասանելիությունը 17.10.2023 թվականի դրությամբ)

Կանադայում, նախքան վարչական որոշումը վիճարկելու համար դատական հայց հարուցելը, վարչական ակտի հասցեատերը որոշումը պետք բողոքարկի վերադաս մարմնին, սպառելով արտադատական կարգով իրավունքի պաշտպանության միջոցները⁵: Այս ինստիտուտը Կանադայում կոչվում է «order of superiority»:

Ընդ որում, ոչ բոլոր դեպքերում է, որ վերադատության կարգով բողոքարկումը պարտադիր պահանջ է Կանադայում: Օրինակ՝ նման դեպքերի շարքին կարելի դասել ներգաղթի դեպքերը: Մասնավորապես, եթե անհատի դիմումը մերժվում է վիզայի կամ մշտական բնակության համար, նրա կարող է պահանջել ներքին վերանայում ներգաղթի և փախստականների խորհրդի կողմից (IRB)՝ նախքան այլ իրավական միջոցների դիմելը:

Իսպանիայում նախնական վարչական մարմինների որոշումների բողոքարկման իրավունքը սպառելուց հետո է հնարավոր նույն որոշումը բողոքարկել դատական կարգով: Նշված ճանապարհի սպառումը իրավասության բողոքարկման թույլատրելիության պայման է (բացառությամբ կանոնակարգի դեպքերի): Նման դեպքերից առկա են որոշ բացառություններ, մասնավորապես, երբ վարչական ակտն ընդունվում է այն մարմնի կողմից, որի դեմ վարչական բողոքարկումը հնարավոր չէ: Օրենքը երաշխավորում է տվյալ դեպքերում առանց վարչական կարգով բողոքարկման դատարան հայց հարուցելու իրավունքը⁶:

Ֆրանսիայում նույնպես առկա է վարչական պաշտպանության միջոցների սպառման սկզբունքը, որը հայտնի է որպես «recours administratif préalable obligatoire» (պարտադիր նախնական վարչական բողոքարկում) և հանդիսանում է վարչական իրավունքի հիմնարար ասպեկտ: Նախքան ֆիզիկական անձինք կամ կազմակերպությունները կարող են վեճը դատարան տանել, նրանցից սովորաբար պահանջվում է անցնել սահմանված վարչական գործընթաց:

Ֆրանսիայի վարչական արդարադատության օրենսգիրքը հիմնական նորմատիվ իրավական ակտն է, որը կարգավորում է վարչական իրավունքը և վարչական որոշումների դատական վերանայումը Ֆրանսիայում, որը ներառում է նաև վարչական պաշտպանության միջոցների սպառման հետ կապված դրույթներ: Մասնավորապես՝ վերադատության կարգով բողոքարկման պարտադիրությունը բխում է այդ օրենսգրքի R421-1 հոդվածից⁷:

Վերոնշյալից ուղղակիորեն բխում է, որ միջազգայնորեն ընդունված է այն մոտեցումը, որ դատական ծանրաբեռնվածությունը թեթևացնելը իրականում հնարավոր է, եթե վարչական ակտի վերանայման

⁵ Տե՛ս <https://www.torys.com/our-latest-thinking/publications/2023/03/federal-court-of-appeal-confirms-administrative-processes-must-be-exhausted-before-judicial-review> (էլեկտրոնային հասանելիությունը 01.10.2023 թվականի դրությամբ)

⁶Տե՛ս chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.aca-europe.eu/en/eurtour/i/countries/spain/spain_en.pdf էջ 7 (էլեկտրոնային հասանելիությունը 17.10.2023 թվականի դրությամբ)

⁷ Տե՛ս https://www.legifrance.gouv.fr/codes/section_lc/LEGITEXT000006070933/LEGISCTA000006136478/#LEGISCTA000006136478 (էլեկտրոնային հասանելիությունը 17.10.2023 թվականի դրությամբ)

այլընտրանքային եղանակներ ներդրվեն ազգային օրենսդրություն կամ առնվազն իրավունքի պաշտպանություն հայցող սուբյեկտների համար դատարան դիմելուց առաջ սահմանվի բողոքարկման այլ հարթակների սպառման պարտադիրություն:

Հայաստանի Հանրապետությունում պարտադիր այլընտրանքային վարչական արդարադատություն իրականացնող մարմին գոյություն չունի, սակայն գործող նորմատիվ իրավական ակտերի շրջանակներում որոշակի փոփոխությունների և համակարգում բարեփոխումների իրականացման միջոցով կարելի է դատական ծանրաբեռնվածությունը որաշակի չափով նվազեցնել: ՀՀ ՆԳՆ ոստիկանության իրավասու մարմինների կողմից կայացված վարչական ակտերը, դրսևորած գործողությունների կամ անգործության վերանայումը ներկայումս իրականացվում է նաև վերադաս մարմնի կողմից: Սակայն վարչական ակտի հասցեատերը որոշ դեպքերում իրավունք ունի համապատասխան վարչական ակտը միանգամից բողոքարկել դատական կարգով՝ առանց վարչական կարգով գանգատ ներկայացնելու:

Ներկայումս նշված իրավակարգավորումները ակնհայտորեն հանգեցնում են վարչական դատարանների անհարկի ծանրաբեռնմանը, քանի որ վարչական կարգով վերանայումը օբյեկտիվորեն կարող է հանգեցնել դատական կարգով բողոքարկման ենթակա վարչական ակտերի ընդհանուր թվի նվազմանը՝ վերադաս մարմնի կողմից այն վերացվելու դեպքում:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության մարմինների կողմից կայացված ակտերի և դրսևորած գործողությունների կամ անգործության վերադատության կարգով բողոքարկելիս վերադաս վարչական մարմնի առաջադրանքը պետք է լինի վարչարարության օրինականության ստուգումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ ՆԳՆ ոստիկանության և դրա ենթակայության տակ գտնվող մարմինների մասնակցությամբ դատական վեճերը և այդ գործերի լուծման կարգը բավականաչափ կանոնակարգված է և բացակայում է իրավունքի մասին վեճը, համապատասխան գործերի մինչդատական օբյեկտիվ վերանայումը չի կարող չհանգեցնել դատարանների ծանրաբեռնվածության նվազմանը:

Նշված նպատակին հասնելու համար, սակայն, անհրաժեշտ է նաև բարձրացնել վարչարարության հասցեատերերի կողմից բողոքը/գանգատը քննող մարմինների պատրաստվածության մակարդակը, միաժամանակ սահմանելով պարտադիր պահանջ նրանց կողմից դատական պրակտիկայի և իրավական նորմերի փոփոխությունների շարունակական ուսումնասիրությունների և վերապատրաստումների պահանջը, քանի որ, եթե միայն սահմանվի պարտադիր վերադատության կարգով բողոքարկման պահանջ, սակայն համապատասխան բողոքը քննող մարմինները չցուցաբերեն հետևողական և օբյեկտիվ վերաբերմունք, ապա անիմաստ կդառնա օրենսդրական նման փոփոխությունների ընդունումը:

Միաժամանակ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել այն հանգամանքը, որ վարչական մարմինների որոշումների, գործողությունների կամ անգործության վերադատության կարգով բողոքարկման/գանգատարկման պարտադիր պահանջ սահմանելը չի սահմանափակում անձի դատարան դիմելու իրավունքը: Թերևս ակնհայտ է առնվազն այն հանգամանքը, որ վարչական պաշտպանության

միջոցների սպառման պարտադիր կարգի սահմանումը չի բացառում անձի դատական պաշտպանություն հայցելու իրավունքը, քանի որ համապատասխան սուբյեկտը փաստացի ոչ թե զրկվում է այդ իրավունքից, այլ որոշակի ընթացակարգերի ներդրման արդյունքում պարտավորվում է սպառել վարչական կարգով իրավունքների պաշտպանության միջոցները, որից հետո նոր նրա մոտ կարող է ծագել դատական կարգով վերանայման համար դիմելու իրավունքը:

«Սահմանադրական դատարանի որոշումներից մեկով արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարանի դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել «Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներից մեկի համաձայն՝ պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ ազգային օրենսդրությամբ նախատեսված հասանելիության աստիճանը նույնպես պետք է բավարար լինի անհատի «դատարանի իրավունքը» ապահովելու համար՝ հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում օրենքի գերակայության սկզբունքը: Մասնավորապես՝ անհատը պետք է ունենա հստակ, գործնական հնարավորություն վիճարկելու իր իրավունքներին միջամտող արարքը¹⁰:

Վերոնշյալ որոշումները վկայում են այն հանգամանքի մասին, որ վերադասության կարգով բողոքարկման պարտադիրությունը չի հակասում ինչպես «Սահմանադրությանը, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հայտնած դիրքորոշումներին: Ուստի՝ նշված կարգավորումները բխում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասից և հանդիսանում արդյունավետ միջոցներ:

Ընդ որում, վերոնշյալ ընթացակարգերի սպառումը իրենից չի ենթադրում որևէ ֆինանսական բեռ, որը նույնպես բացառում է դատական պաշտպանության իրավունքի իրացման սահմանափակման փաստը:

⁸ Տե՛ս 26.06.2015թ. ՍԴՈ-1222:

⁹ Տե՛ս Case of Khalfaoui v. France, (զանգատ թիվ 34791/97) <https://hudoc.echr.coe.int/app/conversion/docx/?library=ECHR&id=001-58374&filename=CASE%20OF%20KHALFAOUI%20v.%20FRANCE.docx&logEvent=False> (էլեկտրոնային հասանելիությունը 17.10.2023 թվականի դրությամբ)

¹⁰ Տե՛ս CASE OF BELLET v. FRANCE (զանգատ թիվ 23805/94) <https://hudoc.echr.coe.int/app/conversion/docx/?library=ECHR&id=00157952&filename=CASE%20OF%20BELLET%20v.%20FRANCE.docx&logEvent=False> (էլեկտրոնային հասանելիությունը 17.10.2023 թվականի դրությամբ)

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության և դրա ենթակայության տակ գտնվող վարչական մարմինների դերը վարչարարության և դրա արդյունքում կայացվող վարչական ակտերի վերանայման հարցում բարձրացնելու դեպքում հնարավոր կլինի լուծել ՀՀ վարչական դատարաններում առկա գերձանրաբեռնվածության խնդիրը, որն էլ իրագործելու համար ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում նախատեսվում են փոփոխություններ և առաջարկվում է սահմանել պարտադիր պահանջ ՀՀ ՆԳՆ ոստիկանության և դրա ենթակայության տակ գտնվող վարչական մարմինների կողմից ընդունված վարչական ակտերի, դրսևորած գործողությունների կամ անգործության վերադասության կարգով բողոքարկման/գանգատարկման:

2.2. Բացառել վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա հայցի հարուցումը՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համար սահմանելով համապատասխան արձանագրության հիման վրա համապատասխան վարչական ակտի կայացման իրավական հնարավորություն.

Հիմնավորում.

Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարական ուղղությունների շարքում է վարչական դատավարության օրենսդրության վերանայումը: Առանձնահատուկ կարևորություն է տրվել վարչական դատավարության շրջանակներում նախատեսված բազում հատուկ վարույթների նախատեսված լինելու նպատակահարմարության քննարկման անհրաժեշտությանը և դրանց վերանայմանը: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հատուկ վարույթների շարքին է դասված դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթը, որը, ըստ էության, վարչական մարմնի գործառույթ է, ինչով էլ հիմնավորել է դրա նախատեսված լինելու քննարկման անհրաժեշտությունը¹¹:

Ուստի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում հատուկ վարույթների իրավական կառուցակարգերը ևս հանդիսանում են Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների համար ռազմավարական նշանակություն ունեցող ուղղություններից մեկը:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 41.5, 47.14, 172.3, 180.1, 182 և 206.16 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու և համապատասխանաբար դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համար հայց ներկայացնելու իրավասությունը վերապահված է ՀՀ ՆԳՆ ոստիկանությանը: Ընդ որում, ՀՀ ՆԳՆ ոստիկանության մարմիններին վերապահված վարչական իրավախախտումները և դրանց համար նախատեսված պատասխանատվության միջոցները ակնհայտորեն չեն տարբերվում այն զանցանքներից, որոնցով համապատասխան լիազորություն ունեցող վարչական մարմինները իրավասու են վարչական

¹¹ Տե՛ս Հավելված N 1, ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133-Լ որոշման: Էջ 51: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176970> (էլեկտրոնային հասանելիությունը 02.10.2023 թվականի դրությամբ)

իրավախախտում թույլ տված սուբյեկտի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու: Հետևաբար՝ բացակայում է նշված վարչական իրավախախտումները տարբերակելու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը:

Եվրոպական երկրների մեծամասնությունում նախատեսված է վարչական պատասխանատվության միայն արտադատական կարգ, սակայն ՀՀ-ն այս հարցում որդեգրել է առավելապես **Ռուսաստանի Դաշնության** փորձը:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության իրավանդումները սահմանելիս և առհասարակ վարչական դատավարության ինստիտուտի ներդրման ընթացքում առանձնահատուկ գնահատման և քննարկման առարկա է եղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, սակայն ՀՀ-ում քննարկման առարկա չեն դարձրել այն իրողությունը, որ **Գերմանիայում** վարչական պատասխանատվության ենթարկելու դատարանի լիազորությունները սահմանափակված են, մասնավորապես՝ դատարանը իրավասու է վարչական պատասխանատվության ենթարկել դատական կարգով միայն վարչական մարմինն¹²:

Համապատասխան իրավադրույթներ սահմանելը տրամաբանական է և անհրաժեշտ, քանի որ համանման կարգավորումների միջոցով առաջանում է իրավական հնարավորություն վարչական մարմնի կողմից իր պարտավորությունների ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության ենթարկելու, որպիսի գործընթացը կարելի է դասել իշխանությունների բաժանման և հավասարակշռման դրսևորման շարքին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով համապատասխան վարույթի շրջանակներում ներկայացվող հայցադիմումին առաջադրվել են որոշակի պահանջներ, մասնավորապես՝ հայցադիմումին ներկայացվող պահանջների շարքում որպես հայցի հարուցման հիմք է հանդիսանում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը: Վերաբերելի օրենսդրական կարգավորումների և դատական պրակտիկայի համալիր ուսումնասիրումից բխում է, որ ՀՀ վարչական դատարանները ստանալով հայցադիմումը սկսում են ձեռնարկել ապացույցների ձեռքբերման գործընթացը, քանի որ միայն արձանագրության հիման վրա օբյեկտիվորեն բացակայում է արդարադատության իրականացման հնարավորությունը:

Ուստի, նշված ընթացակարգի վերլուծությունից ակնհայտորեն կարող ենք արձանագրել, որ ՀՀ վարչական դատարանում համապատասխան հայց հարուցվելուց հետո կատարվում է այն նույն գործընթացը, որը սովորաբար կատարվում է այլ գործերով, երբ իրավասու մարմինը արձանագրությունը կազմելուց և համապատասխան ապացույցները ձեռք բերելուց հետո կայացնում է վարչական ակտը:

¹² Տե՛ս <https://academic.oup.com/book/39623/chapter-abstract/339567061?redirectedFrom=fulltext> (էլեկտրոնային հասանելիությունը 02.10.2023 թվականի դրությամբ):

Հայրենական իրավաբան գիտնականներից Գ. Դանիելյանը դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթի վերաբերյալ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«Առավել մտահոգող է այն, որ Օրենսգիրքը որևէ առանձնահատկություն չի նախատեսում հիշյալ հատուկ վարույթի համար, ինչից ուղղակիորեն բխում է, որ դատարանը վարչական դատավարության ընդհանուր կանոններով պետք է միջոցներ ձեռնարկի ապացույցներ ձեռք բերելու համար:

Ասվածից բխում է նաև, որ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը ոչ միայն անհարկի, այլև անհիմն ծանրաբեռնվածություն է առաջացնում դատարանների և վարչական մարմինների համար:»¹³:

Վերոնշյալից կարող ենք արձանագրել, որ գործող իրավակարգավորումներով անհարկի ծանրաբեռնվածություն է դրվել ՀՀ վարչական դատարանի վրա: Հայցի հարուցման պահից կատարվում են այնպիսի գործողություններ, որոնք սովորաբար կատարվում են վարչական վարույթի ընթացքում, ընդ որում, եթե այլ հատուկ վարույթների շրջանակներում վարչական իրավախախտման բնույթից ելնելով կարող է հիմնավորված համարվել նման մոտեցումը, այնուամենայնիվ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով ՀՀ ՆԳՆ ոստիկանության մարմիններին վերապահված դեպքերը ակնհայտորեն կարող են քննվել վարչական վարույթի շրջանակներում առանց ՀՀ վարչական դատարանի մասնակցության, իսկ հետագայում՝ անհրաժեշտության դեպքում բողոքարկվել:

Բողոքարկման դեպքում ՀՀ վարչական դատարանի տրամադրության տակ կլինեն վարույթի ընթացքում ձեռք բերված և վարչական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացած ապացույցները, ուստի՝ լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի դրվի ՀՀ վարչական դատարանի վրա՝ ապացույցներ ձեռք բերելուն ուղղված գործողություններ կատարելու համար: Բացի այդ, դատարանը օբյեկտիվորեն չի կարող իրականացնել այն բոլոր գործառույթները, որը կարող է իրականացնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության իրավասու մարմինը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք արձանագրել, որ վարչական պատասխանատվությունը հետապնդում է այլ նպատակ, քան անձի խախտված իրավունքի դատական կարգով վերականգնումն է: Այն առավելապես կրում է հանրային բնույթ, հետևաբար նպատակարմար չէ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան գործը քննելու իրավասություն ունեցող մարմինը չունենա իրավասություն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված գործերով վարչական պատասխանատվության ենթարկելու, ինչի պայմաններում իրավախախտման վերաբերյալ որոշման հետ համաձայն չլինելու դեպքում անձը զրկված չի լինի դատական կարգով այն վիճարկելու հնարավորությունից:

¹³ Տե՛ս «Վարչական վարույթ և դատավարություն»: Ուսումնական ձեռնարկ/ Գ. Դանիելյան,-Եր.: ԵՊՀ հրատ., 2022.-465 էջ:

Ուստի, ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում նախատեսվել են փոփոխություններ՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան իրավասու մարմիններին վերապահելով արձանագրության հիման վրա վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը այն բոլոր վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով, որոնցով ներկայումս համապատասխան մարմինները բացառապես կազմում են արձանագրությունը և հայց են հարուցում վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով:

Բացի այդ, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով կարգավորում է նախատեսվում «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի պահանջներին համապատասխան հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերը վարչական ակտի հասցեատիրոջ նշած էլեկտրոնային փոստային հասցեին ուղարկելու վերաբերյալ: Այս դեպքում որոշման հասցեատիրոջ էլեկտրոնային փոստային հասցեին որոշումն ուղարկելը հավաստվելու է վարչական մարմնի կողմից՝ վարչական մարմնի էլեկտրոնային փոստի համակարգը կառավարողի (սպասարկողի) կողմից ինքնաշխատ եղանակով գեներացված փաստաթղթով: Նշված եղանակով վարչական ակտի հասցեատիրոջը ծանուցելու դեպքում նախատեսվում է նշանակել տուգանքի գումարից երեսուն տոկոսի չափով պակաս տուգանք:

Բացի այդ, սույն նախագծով, ինչպես արդեն նշվել է, նախատեսվում է խրախուսական նորմ՝ համապատասխան հողվածներով նախատեսված վարչական տուգանք նշանակելու մասին որոշումը 15-օրյա ժամկետում կատարելու դեպքում տուգանքի 70 տոկոսը վճարելու պարագայում պարտավորությունը համարել կատարված: Նշված խրախուսական նորմի նախատեսմամբ պայմանավորված՝ տրանսպորտային միջոցների կայանման կանոնների խախտումների դեմ պայքարի արդյունավետությունն ապահովելու նպատակով նախատեսվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-23-րդ մասերում նախատեսված 0,5 տուգանային միավորը փոխարինել 1 տուգանային միավորով, իսկ 25-րդ և 27-րդ մասերում նախատեսել 0.5 տուգանային միավորի կիրառում:

2.3. ՀՀ ՆԳՆ ոստիկանության իրավասու մարմինների կողմից կայացված վարչական իրավախախտումների վերաբերյալ ակտերի դեմ դատական կարգով գանգատարկման համար սահմանված պետական տուրքի չափի վերանայում.

Հիմնավորում.

Տարածված գաղափար է, որ ՀՀ քաղաքացիների համար դատարան դիմելու խոչընդոտ կարող է հանդիսանալ դատարան հայց ներկայացնելու համար նախատեսված պետական տուրքը: Առաջին հայացքից

կարող է թվալ, որ ինչքան փոքր լինի հայց ներկայացնելու համար նախատեսված վճարման ենթակա պետական տուրքի չափը, այնքան անձանց դատարան դիմելը ավելի հասանելի կլինի: Սակայն նման պարագայում արդարադատության իրականացման ծախսերի բեռը կրելու են հասարակության այն անդամները, որոնք չեն օգտվում դատարան դիմելու իրենց իրավունքից: Նման իրողության պատճառն այն է, որ դատարանները ծախսերի գերակշիռ մասը հոգում են պետության կողմից ֆինանսավորմամբ: Որքան քիչ լինի պետական տուրքի չափը, այնքան շատ կլինի լրացուցիչ ֆինանսների ներգրավման անհրաժեշտությունը, որպիսի բեռը ուղղակիորեն դրվելու է ՀՀ հարկատուների վրա:

Պետական տուրքի դրույքաչափի ցածր լինելը նաև շատ դեպքերում կարող է հանգեցնել դատարան դիմելու իրավունքի չարաշահմանը, քանի որ, հաշվի առնելով դատական ծանրաբեռնվածությունը, անձինք իրենց դրամական պարտավորությունները հետաձգելու նպատակով նույնիսկ կարող են դատական կարգով վարչական ակտը բողոքարկել, որպեսզի հնարավորինս հետաձգվի վարչական ակտի կատարումը: Նման անբարեխիղճ դրսևորումները բացասաբար են անդրադառնում ընդհանուր արդարադատության իրականացման որակի վրա, քանի որ ՀՀ վարչական դատարանը անհարկի ծանրաբեռնվում է չհիմնավորված հայցերով, որոնց համար նույնպես հատկացվում է ժամանակ՝ որոշում գրելու, նիստեր անցկացնելու և անհրաժեշտ այլ դատավարական գործողություններ կատարելու համար:

Ընդ որում, պետական տուրքի համար ավելի բարձր դրույքաչափ նախատեսելը վարչական ակտի հասցեատիրոջը ավելի բարեխիղճ կդարձնի նաև վարչական վարույթի և դրա բողոքարկման ընթացքում, քանի որ վարչական ակտի հասցեատերը ավելի շահագրգռված կլինի պատշաճ ապացույցներ և հիմնավոր դիրքորոշումներ ներկայացնելու համար:

Ուստի, կարելի է գալ այն եզրահանգման, որ արդյունավետ արդարադատության իրականացման համար օբյեկտիվորեն չի կարելի ֆինանսական մեծ բեռը դնել դատավարության սուբյեկտ չհանդիսացող այլ անձանց վրա, քանի որ առանց այդ էլ արդարադատության իրականացման գործընթացը բարելավելու համար նախատեսվում են ահռելի ֆինանսական միջոցներ, իսկ ներկայիս գործող պետական տուրքի դրույքաչափերը հնարավորություն չեն տալիս բավարար չափով վարձատրել նույնիսկ դատավորներին:

Դատական տեղեկատվական համակարգից ստացված տվյալներով (datalex.com)¹⁴ վարչական դատարանները 2019 և 2022 թվականներին¹⁴ ստացել են հետևյալ թվով, ՀՀ ՆԳՆ ոստիկանության մասնակցությամբ, գործեր.

| | | |
|--|--------|--------|
| | 2019թ. | 2022թ. |
|--|--------|--------|

¹⁴ Սույն ամփոփագրում քննարկման առարկա է դարձվել 2019 թվականը, քանի որ 2019 թվականին դեռևս գործում էին նախկին պետական տուրքի դրույքաչափերը և Covid 19-ով պայմանավորված վարչական դատարանը չուներ լրացուցիչ ծանրաբեռնվածություն:

| | | |
|---|-------|-------|
| ՀՀ ճանապարհային նստիկանությունը պատասխանող որպես | 6,901 | 1,110 |
| ՀՀ նստիկանությունը պատասխանող որպես | 142 | 468 |
| ՀՀ նստիկանության ծառայությունը պատասխանող որպես | | 1,202 |

Վերոնշյալ տվյալների ուսումնասիրումից բխում է, որ 2021 թվականին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարվելուց հետո, մասնավորապես՝ դատարան հայց ներկայացնելու համար սահմանված դրույքաչափերի փոփոխությունից հետո, վարչական դատարան մուտքագրվող հայցերի ընդհանուր թիվը նվազել է նաև այն գործերով, որտեղ պատասխանող կողմում հանդես են գալիս ՀՀ նստիկանությունը կամ ՀՀ նստիկանության մարմինները: Ուստի, նշվածով ևս հիմնավորվում է, որ դատական կարգով գանգատարկման համար սահմանված պետական տուրքի չափի փոփոխությունը թեթևացնում է վարչական դատարանը անհիմն հայցերից:

Այլ պետությունների շարքում կարելի է առանձնացնել **Հոլանդիան, Գերմանիան և Ֆրանսիան**, որտեղ նախատեսված են համեմատաբար ավելի բարձր պետական տուրքի դրույքաչափեր դատարան դիմելու համար, ինչը նպատակ է հետապնդում բացառել դատական իրավունքի չարաշահումները և լրացուցիչ ֆինանսական բեռ չդնել դատավարության սուբյեկտ չհանդիսացող անձանց վրա:

Ուստի, առաջարկվում է բարձրացնել ՀՀ ՆԳՆ նստիկանության կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ կայացված որոշումը դատական կարգով գանգատարկելու համար սահմանված պետական տուրքի չափը՝ իհարկե պահպանելով դատարանի մատչելիության սահմանադրաիրավական և կոնվենցիոն իրավունքի անխոչընդոտ իրականացումն ապահովելու պետության պոզիտիվ պարտավորության իրացումը և սեփականության իրավունքին անհարկի միջամտության անթույլատրելիության սկզբունքը:

2.4. ՀՀ ՆԳՆ Ոստիկանության ընդունած վարչական ակտերի դատական կարգով վիճարկման գրավոր դատաքննության ընթացակարգի սահմանում՝ միաժամանակ նախատեսելով որոշակի բացառություններ.

Հիմնավորում.

Դատական համակարգի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է դատարանների ծանրաբեռնվածության աստիճանից, քանի որ դատական սխալների և ողջամիտ ժամկետում քննություն չիրականացնելու հիմնական պատճառը դատավորների գերծանրաբեռնվածությունն է:

2022 թվականին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում օրենսդիրը գրավոր ընթացակարգի ներդրմանը ուղղված փոփոխություն կատարեց, իսկ նշված օրենսդրական փոփոխության նախագծում տեղ

գտած հիմնավորումների մեջ ի թիվս այլի արձանագրվել էր, որ գրավոր ընթացակարգը վարչական դատավարությունում ներդնելու անհրաժեշտությունը պայմանավորված է եղել նախևառաջ այն հանգամանքով, որ վարչական դատարանում չափազանց մեծ քանակով վիճարկվում են ճանապարհային ոստիկանության կողմից կայացված տուգանքների վերաբերյալ որոշումները:

Միաժամանակ նշվել էր, որ Վարչական դատարանում վիճարկման գործերի զգալի մասը կազմում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածով, 123.5-րդ հոդվածի 1-2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանվել է, որ Վարչական դատարանում վիճարկման հայցերով գործերի քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123-րդ, 123.3-րդ, 123.4-րդ հոդվածներով, 123.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.7-րդ, 129.2-րդ, 131-րդ, 135.2-րդ և 137.4-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը՝ անկախ ներկայացված հայցատեսակից, իրականացվում է գրավոր ընթացակարգով:

Միաժամանակ սահմանվել են ընդհանուր կանոնից բացառություններ, մասնավորապես՝ գործը չի կարող քննվել գրավոր ընթացակարգով, եթե՝

1) առկա է դատավարության մասնակիցներին, վկաներին, փորձագետին հարցաքննելու, փորձաքննություն նշանակելու, ապացույցը զննելու կամ դատական հանձնարարություններ տալու անհրաժեշտություն.

2) դատարանը վարույթ է ընդունել հակընդդեմ հայց.

3) առկա է ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու կամ գործի քննությանն այլ անձանց (բացառությամբ երրորդ անձի) ներգրավելու անհրաժեշտություն.

4) անհրաժեշտ է ձեռնարկել սույն օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված գործողություններ, որոնք դատարանի գնահատմամբ չեն կարող իրականացվել գրավոր ընթացակարգով:

Գերմանիայի վարչական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը կարող է առանց դատական նիստ հրավիրելու անցնել վճռի կայացման, եթե գործը փաստական կամ իրավական որևէ առանձնահատկություն և/կամ դժվարություն չունի և եթե գործի փաստական հանգամանքները պարզված են, իսկ նշված կարգով քննվող դատական ակտերի վրա դատական ակտին առաջադրվող պահանջները կիրառելի են *mutatis mutandis* սկզբունքով¹⁵:

Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքի 291-րդ հոդվածի համաձայն՝ վարչական գործը կարող է քննվել պարզեցված (գրավոր) ընթացակարգով, եթե՝

¹⁵ Տե՛ս https://www.gesetze-im-internet.de/englisch_vwgo/englisch_vwgo.html#p0427 (էլեկտրոնային հասանելիությունը 04.10.2023 թվականի դրությամբ)

➤ գործին մասնակցող բոլոր անձինք միջնորդել են գործը քննել իրենց բացակայությամբ և նրանց մասնակցությունը տվյալ գործին պարտադիր չէ,

➤ հայցվորը խնդրել է կիրառել պարզեցված վարույթ, իսկ պատասխանողը չի առարկել,

➤ տվյալ գործով դրամական պարտավորությունը կամ որպես տուգանք նշանակված գումարը չի գերազանցում 20.000 ռուբլին,

➤ օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում¹⁶:

Ռուսաստանի Դաշնային վարչական դատավարության օրենսգրքով սահմանված այլ դեպքերի շարքին կարելի է դասել՝

➤ **դատական նիստին չեն ներկայացել գործին մասնակցող բոլոր անձինք, որոնք պատշաճ կերպով ծանուցվել են դրա քննարկման ժամանակի և վայրի մասին, որոնց ներկայանալը պարտադիր չէ կամ դատարանի կողմից պարտադիր չի ճանաչվել, կամ այդ անձանց ներկայացուցիչները¹⁷,**

➤ **եթե վիճարկվում է միանման նորմատիվ ակտն ուժը կորցրած ճանաչելուց հետո կրկին ընդունված նորմատիվ ակտը, եթե կրկնվող նորմատիվ իրավական ակտի ընդունման պահին օրենսդրության մեջ փոփոխություններ չեն եղել, որոնց հակասում է անվավեր ճանաչված նորմատիվ ակտը. որ վարչական պատասխանողի կողմից ամփոփ ընթացակարգի վերաբերյալ առարկություններ չկան¹⁸:**

Էստոնիայի վարչական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը կարող է կիրառել պարզեցված վարույթ, եթե՝

➤ Անձի իրավունքի խախտումը, որի համար հարուցվել է հայցը, աննշան է (Էստոնիային վարչական դատավարության օրենսգրքի իմաստով, աննշանի նյութականացված արժեքը 1000 եվրոյից ցածր գումարն է),

➤ Դատավարության կողմերը ուղղակիորեն հայտնել են իրենց համաձայնությունը: Դատավարության մասնակիցը կարող է հետ վերցնել իր համաձայնությունը հարցի պարզեցված ընթացակարգով քննարկման համար միայն այն դեպքում, եթե վարույթում իրավիճակն էականորեն փոխվել է¹⁹:

¹⁶ Տե՛ս [КАС РФ Статья 291. Возможность рассмотрения административных дел в порядке упрощенного \(письменного\) производства \ КонсультантПлюс \(consultant.ru\)](#) (էլեկտրոնային հասանելիությունը 05.10.2023 թվականի դրությամբ)

¹⁷ Տե՛ս [КАС РФ Статья 150. Последствия неявки в судебное заседание лиц, участвующих в деле, их представителей \ КонсультантПлюс \(consultant.ru\)](#) (էլեկտրոնային հասանելիությունը 05.10.2023 թվականի դրությամբ)

¹⁸ Տե՛ս [КАС РФ Статья 216. Последствия признания нормативного правового акта не действующим полностью или в части \ КонсультантПлюс \(consultant.ru\)](#) (էլեկտրոնային հասանելիությունը 05.10.2023 թվականի դրությամբ)

¹⁹ Տե՛ս [Code of Administrative Court Procedure–Riigi Teataja](#) (էլեկտրոնային հասանելիությունը 06.10.2023 թվականի դրությամբ)

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդար դատաքննության երաշխիքները, մասնավորապես նաև՝ բանավորության սկզբունքը, կիրառելի են այն դեպքերում, երբ որոշվում են անհատի քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները կամ նրա նկատմամբ ներկայացված քրեական մեղադրանքը: Այդ երաշխիքների բնույթը տարբերվում է կախված նրանից, թե արդյոք որոշվում են անհատի քաղաքացիական իրավունքները/պարտականությունները (քաղաքացիական, վարչական դատավարության շրջանակներում), թե՛ նրան ներկայացված քրեական մեղադրանքը (քրեական դատավարության շրջանակներում): Քանի որ արդար դատաքննության իրավունքը բացարձակ չէ, բացառիկ հանգամանքներում թույլատրվում է առհասարակ հրաժարվել բանավորությունից և վարչական գործի քննության համար սահմանել գրավոր ընթացակարգ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր որոշումներից մեկով արձանագրել է, որ առկա են լինում դեպքեր, երբ վեճը չի ունենում հանրային կարևոր նշանակություն՝ պայմանավորված վեճի տեխնիկական բնույթով, և նշված դեպքերում լսումներ անցկացնելու անհրաժեշտությունը բացակայում է: Հետևաբար՝ համանման դեպքերում համապատասխան վեճի լուծման կարգավորումների արդյունավետությունը և տնտեսապես նպատակահարմարությունը պետք է գնահատման առարկա դարձվեն: Ընդ որում, նույն որոշմամբ արձանագրվել է, որ լսումների համակարգված անցկացումը կարող է կանխել «ողջամիտ ժամանակի» պահանջի կատարումը:²⁰

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով «հրապարակային լսումների» իրավունքը ենթադրում է «բանավոր լսումների» իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ կան բացառիկ հանգամանքներ, որոնք արդարացնում են նման լսումների բացակայությունը: Նույն որոշմամբ արձանագրվել է, որ բանավոր լսումներից հրաժարվելը կարող են դատարանները պայմանավորել որոշվող հարցերի բնույթով, այլ ոչ թե նման իրավիճակների հաճախականությամբ:²¹

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ գործը կարող է քննվել գրավոր ընթացակարգով, եթե.

➤ գործը չի պարունակում փաստի կամ իրավունքի այնպիսի հարց, որի լուծումը բացառվում է գրավոր ընթացակարգով՝ դատական գործում առկա նյութերի և կողմերի ներկայացրած գրավոր նյութերի հիման վրա,

²⁰ St'u Schuler-Zraggen v. Switzerland (գանգատ թիվ 14518/89), 24.06.1993թ., պարբ. 58: <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%22001-57840%22%7D> (էլեկտրոնային հասանելիությունը 06.10.2023 թվականի դրությամբ)

²¹ St'u Miller v. Sweden (գանգատ թիվ 55853/00), 08.02.2005թ., պարբ. 29: <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22%3A%22001-68178%22%7D> (էլեկտրոնային հասանելիությունը 06.10.2023 թվականի դրությամբ)

➤ գործը կրում է այնպիսի տեխնիկական բնույթ, որ լուծումն ավելի շուտ պահանջում է փորձագիտական գիտելիքներ, քան կողմերի բանավոր փաստարկները, օրինակ՝ սոցիալական/ապահովագրական վճարների հաշվարկները²²:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ միջազգայնորեն համընդհանուր ընդունված է այն իրողությունը, որ դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու տարբերակներից է հանդիսանում գրավոր ընթացակարգի ներդրումը ազգային օրենսդրության մեջ:

Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականին կատարված փոփոխություններից հետո բավականաչափ նվազել են բանավոր ընթացակարգով քննվող ՀՀ ՆԳՆ ոստիկանության մասնակցությամբ դատական գործերը, սակայն այնուամենայնիվ առկա են լինում որոշ դեպքեր, երբ բանավոր լսումներ են անցկացվում:

Միջազգային փորձի ուսումնասիրումից պարզ է դառնում, որ սովորաբար այն դեպքերում, երբ գործը չի պարունակում փաստի կամ իրավունքի այնպիսի հարց, որը բացառում է գործի քննության գրավոր ընթացակարգի օբյեկտիվ հնարավորությունը, գործի քննությունը իրականացվում է գրավոր ընթացակարգով:

Ներկայումս ՀՀ ՆԳՆ ոստիկանության մասնակցությամբ տեղի ունեցող վարչական գործերի մեծամասնությունում ակնհայտորեն բացակայում են իրավունքի մասին վեճերը, քանի որ նշված գործերը կրում են առավելապես տեխնիկական բնույթ: Օրինակ՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից ներկայացված ապացույցների հիման վրա վարչական դատարանը պարզում է վարչական ակտի, գործողության/անգործության հիմնավորվածությունը: Այսպիսով, նման գործերով նախընտրելի է գրավոր ընթացակարգը, երբ գործի քննության համար որոշիչ են վարչական մարմնի տիրապետության տակ գտնվող նյութերը, լրացուցիչ նյութեր ձեռք բերելու անհրաժեշտությունը բացակայում է, իսկ կողմերի բանավոր փաստարկները անհրաժեշտ չեն:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով վերջին օրենսդրական բարեփոխումները և միջազգային փորձը, գտնում ենք, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության մասնակցությամբ դատական գործերի բացառապես գրավոր ընթացակարգ նախատեսելու հետ միաժամանակ անհրաժեշտ է սահմանել բացառություն: Օրինակ՝ եթե վարչական դատարանի գնահատմամբ անհրաժեշտ լինի իրականացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված գործողությունները՝ գրավոր ընթացակարգով իրականացնելու անհնարինության դեպքում, ապա դատարանը գործի քննությունը կիրականացնի բանավոր ընթացակարգով:

Ամբողջ վերոշարադրյալը վկայում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ՀՀ ՆԳՆ ոստիկանության մասնակցությամբ գործերով բացառապես գրավոր ընթացակարգի ներդրման

²² St' u Schuler-Zraggen v. Switzerland (գանգատ թիվ 14518/89), 24.06.1993թ., պարբ. 57: <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-57840%22%7D> (էլեկտրոնային հասանելիությունը 07.10.2023 թվականի դրությամբ)

անհրաժեշտության մասին: Ընդհանուր կանոնից բացառություն նախատեսվում է սահմանել միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերը:

1.5. Նախագծով առաջարկվում է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի մի շարք հոդվածներով նախատեսված իրավախախտումների համար նշանակված տուգանքի գումարի առնվազն 70 տոկոսը տուգանք նշանակելու մասին որոշումը ստանալուն հաջորդող օրվանից օրենքով սահմանված ժամկետում կամովին վճարելու դեպքում իրավախախտում կատարած անձանց նկատմամբ նշանակված տուգանքի վճարման պարտականությունը համարել պատշաճ կատարված (ընդ որում, օրենքում նախատեսվում է բացառություն այն դեպքերում, երբ տուգանք նշանակելու մասին որոշումը բողոքարկվում է):

3. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտությունն ուղղակիորեն նախատեսված չէ համապատասխան ռազմավարական փաստաթղթերում:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք.

Նախագծերի փաթեթը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից համատեղ՝ ԵԱՀԿ փորձագիտական աջակցության ներգրավմամբ:

5. Ակնկալվող արդյունքը.

Սույն նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում համապատասխան նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու միջոցով կբարձրանա ՀՀ Ոստիկանության իրավասու մարմինների կողմից ընդունված վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման վարույթի նշանակությունը և դերը՝ միաժամանակ ապահովելով վարչական դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրականացման օբյեկտիվ հնարավորությունը՝ անհարկի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու միջոցով:

Առաջադրված նպատակներին հասնելուն ուղղված օրենսդրական բարեփոխումների արդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետ և որակյալ դարձնել վարչական մարմնի կողմից իրականացվող վարչարարությունը, ստեղծել անհրաժեշտ պայմաններ վարչական դատարանների կողմից արդյունավետ արդարադատության իրականացման համար, ինչպես նաև բացառել անհարկի դատական կարգով վարչական ակտերի բողոքարկումները:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է նաև խրախուսել դրանով սահմանված վարչական իրավախախտումների հիմքով վարչական պատասխանատվության ենթարկված անձանց կողմից վարչական

ակտը կամովին կատարելը, ինչպես նաև՝ պարտապանի գույքի անբավարարության հիմքով ավարտված՝ այդ խումբ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հարուցված կատարողական վարույթներով պարտապանի կողմից պարտավորությունը կատարելը:

Արդյունքում ակնկալվում է նաև այս խումբ վարչական ակտերի կատարման համար ծախսվող վարչական ռեսուրսի խնայողություն, Ծառայության, Ոստիկանության, Վարչական դատարանի և Վերաքննիչ վարչական դատարանի ծանրաբեռնվածության էական նվազեցում, ինչպես նաև հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման փուլում սոցիալական լարվածության նվազեցում:

Մինչույն ժամանակ, սույն փաթեթի ընդունումը լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում չի պահանջում, ավելին՝ պետական բյուջեի եկամուտներում սպասվում են փոփոխություններ, որոնք, սակայն, կարգավորումների բնույթից ելնելով, հստակ կանխատեսել հնարավոր չէ: Այնուամենայնիվ, սույն նախագծի ընդունման դեպքում իրական հնարավորություն կստեղծվի հոգուտ պետական բյուջե գանձելու այն բազմաթիվ տուգանքների գումարները, որոնք նախկինում չէին վճարվել, և որոնց ամբողջությամբ գանձման հեռանկարը քիչ հավանական էր:

◀◀ ներքին գործերի նախարարություն